

ԳՐԻԳՈՐ ՂԱՓԱՆՑՅԱՆ

Հ. Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

Նշանավոր հայագետ, լեզվաբան, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Գրիգոր Այվազի Ղափանցյանը մեծ ավանդ է ներդրել սովետական լեզվաբանական գիտության և հատկապես հայագիտության մեջ:

Գ. Ա. Ղափանցյանը ծնվել է 1887 թ., Աշտարակում: Նախնական կրթությունն ստացել է հայրենի գյուղի երկ-գասյան ուսումնարանում: 1899 թ. կրթությունը շարունակելու նպատակով, նա մեկնել է Պետերբուրգ: 1908 թ. Պետերբուրգի գիմնազիան ավարտելուց հետո ընդունվել է Պոլիտեխնիկական ինստիտուտ, սակայն այգտեղ երկար չի մնացել. մի տարի սովորելուց հետո տեղափոխվել է Պետերբուրգի համալսարանի Արևելյան ֆակուլտետի հայ-վրացական բանասիրության բաժինը, միաժամանակ դասախոսություններ լսելով հնդկությունական լեզուների համեմատական քերականության, ընդհանուր լեզվաբանության վերաբերյալ:



Ստաճելով լեզվաբանական լուրջ պատրաստություն, Ղափանցյանը 1913 թ. առաջին կարգի զիսկոմով ավարտում է Պետերբուրգի համալսարանը և վերադառնում Հայաստան: 1913 թ. մինչև 1918 թ. նա էջմիածնում դրաղվել է զիտա-մանկավարժական գործունեությամբ, դասավանդելով ընդհանուր լեզվաբանություն և հայերենի համեմատական քերականություն:

Ղափանցյանի զիտական առաջին աշխատությունները տպագրվել են «Արարատ» ամսագրում 1914 թ. («Հնագույն մի քանի հուշարձաններ», «Լեզվաբանական զիսկալիքներ և լեզու»):

Երևանի Պետական համալսարանի հիմնադրման առաջին իսկ օրից պրոֆ. Ղափանցյանը հրավիրվում է Համալսարանում դասախոսելու: Գիտա-մանկավարժական գործունեությանը զուգընթաց, բարենպաստ շարժմաններ են ստեղծվում նրա հետազոտական աշխատանքների համար:

Շուրջ 45 տարվա զիտական գործունեության ընթացքում Գրիգոր Այվազի Ղափանցյանը մեծ սիրով ու ջանասիրությամբ ուսումնասիրում էր հույանաբան-

պատմական այն կապերը, որ հայ ժողովուրդն ունեցել է իր շրջապատի հնագույն ցեղերի ու ժողովուրդների հետ՝ մեր դարաշրջանից հարյուրամյակներ առաջ: Առանձնապես մեծ են նրա ծառայությունները խեթերին, խուրիտերին, ուրարտերին, բալայերին, լադո-մեգրեթերին և այլ լեզուների աղերսակցությունը հայերենի հետ պարզելու գործում: Նրա գիտական հետազոտությունները նվիրված են հայագիտության կարևոր պրոբլեմներին՝ հայ ժողովրդի, նրա լեզվի և կուլտուրայի գոյացման և հետագա զարգացման խնդիրներին: Պրանցից առանձնապես նշանավոր են «Chetto Armeniaca» (1931), «Ընդհանուր լեզվաբանություն» (1939), «Ուրարտուի պատմություն» (1940), «Хеттские боги у армян» (1940), «Историко-лингвистическое значение топонимии древней Армении» (1940), «Արա Գեղեցիկի պաշտամունքը» (1944), «К происхождению армянского языка» (1946), «Хайаса—колыбель армян» (1947), «Պատմա-լեզվաբանական աշխատություններ» (1956, հատ. I) և վերջապես «Հայոց լեզվի պատմության հին շրջանը» (1961):

Գ. Ղափանցյանը խոշոր ուրարտագետ էր, հայերեն լեզվով նա առաջինն է գրել բնդարձակ մենագրական ուսումնասիրություն՝ ուրարտերեն լեզվի պատմության և ուրարտական կուլտուրայի մասին, բազմաթիվ վերծանումներ է կատարել և շատ խնդիրներ պարզարանել: Նրկար ժամանակ զբաղվելով բնդհանուր լեզվաբանության հարցերով, գրել է բնդհանուր լեզվաբանության առաջին հայերեն մեծածավալ արժեքավոր ձեռնարկը, որի մեջ վերագնահատելով լեզվաբանական մի շարք հարցեր, իր կողմից տվել է լուրջ և նոր լուսարանումներ:

Ակադեմիկոս Ղափանցյանը լեզվաբանական հարցերի հետ միասին, իր աշխատություններում ուսումնասիրում և լուծում էր նաև պատմագիտական, ազգագրական, հնագիտական և դիցարանական մի շարք լուրջ հարցեր: Այս տեսակետից նա ուրույն տեղ է զբաղում հայագիտության մեջ: Ղափանցյանի գիտական գործունեության մեջ, հայերենագիտության հարցերի նկատմամբ՝ նոր մոտեցում ցուցարկերին սկսվում է հատկապես 1930-ական թթ., երբ նա հայագիտական հարցերի առկա լայն ընդգրկման և պարզարանման համար ուսումնասիրում է փոքրասիական մի շարք մեծած լեզուներ, ինչպես, օրինակ՝ խեթերին, ուրարտերին, խուրիտերին, բալայերին և այլն:

Այդ շարքին պատկանող նրա աշխատություններից առաջինը «Chetto Armeniaca»-ն է, որի մեջ հեղինակն առաջին անգամ գիտականորեն հիմնավորում է խեթական և հայկական լեզվական բնդհանրությունները: Ղափանցյանը պարզել է, որ խեթական և հայկական լեզվական բազմաթիվ բնդհանրություններ փոխառություններ չեն, այլ գալիս են վաղեմի ժամանակներից, դեռևս հայ ժողովրդի կազմավորման շրջանից: Նա ցույց է տվել հայկական և խեթական լեզուների մեջ եղած հարյուրից ավելի լեզվական բնդհանրության փաստեր, դրանցից հիշենք մի քանիսը.

1. խեթական ծագում ունեն հայերենում լայնորեն գործածվող «-որ», «-ու», «-իդ» մասնիկները, օրինակ՝ «երկ-իդ», «բնդ-իդ», «հատ-որ», «բնդ-որ», «քակ-որ», «աարս-ու», «ապ-ու» և այլ բառերի մեջ:

2. -ar մասնիկի առկայությունը բառարարդության ժամանակ խեթական և հայկական լեզուներում բնդհանուր է, օրինակ՝ խեթ. gimand-ar-ianun

(«Եւ ձմեռն անցկացրի»), հայերեն «խանդ-ար-ել», «մեծ-ար-ել», «զարդ-ար-ել», «յարդ-ար-ել» և այլն:

3. Ըստ Դ. Ղափանցյանի ստուգարանությունների, խեթերենից հայերենին անցել են հետևյալ բառերը՝ «խեթել», «խանդաղատանք», «նախանձ», «հերթ», «հեշտ», «ախոյան», «խողխողել», «խարդախ», «թախիծ», «քրթմնջալ», «բարգավաճ», «խամրիլ», «ապա», «վառել», «դեղդոջ», «պաղպաղել», «ապավեն», «ապաքինել», «խոկալ», «խուսափել», «խրամ», «ծխաղ», «բարբաջել», «մորմորալ» և այլն:

Փոքր Ասիայի հարավում և հարավ-արևելքում ապրող հնդեվրոպական ցեղերը հարևանության և շփման մեջ են գտնվել Փոքր Ասիայի արևելյան և հյուսիս-արևելյան ոչ հնդեվրոպական ցեղերի հետ, որի ընթացքում տեղի են ունեցել լեզուների խաչավորման բարդ պրոցեսներ:

Այդ տեսության օգտին է խոսել Ղափանցյանը իր «Ածանցները և ածանցված բառերը հին Փոքր Ասիայի տեղանուններում» աշխատության մեջ: Մյուս աշխատությունը, որի մեջ Ղափանցյանը պարզում է հայոց լեզվի սերտ աղերսակցությունը Փոքր Ասիայում տեղադրված լեզուների հետ, «Հին Հայաստանի տեղանունների պատմա-լեզվաբանական նշանակությունը» խորագիրը կրող նշանավոր մենագրությունն է, որի մեջ նա հայկական տեղանունների հիման վրա ցույց է տվել այդ լեզուների աղղկցության բազմաթիվ փաստեր հայերենի վրա: Այսպես, օրինակ՝ հայկական տեղանունների մեջ վերջնաչին «-բեր» ածանցը ունեցել է «տան» նշանակություն: Այդ ածանցը խեթերենում եղել է «բիր» ձևով, որ նշանակել է «տուն», «ցեղ» և որի առկայությունն այժմ նկատելի է նաև վրացերենում, հատկապես աղղանունների մեջ, ինչպես Ղոզոբիսիձե, Ֆերիտաշվիլի, Եկաբսիձե և այլն: Հայերենում «բեր» ածանցով ունենք հետևյալ տեղանուններն ու աղղանունները. «Տամբեր», որ նշանակում է «տամ ցեղ», «Քաջբերունի» — «քաջ ցեղ» և այլն:

Իր ուսումնասիրությունների մեջ, Դ. Ղափանցյանը բազմաթիվ լեզվական ընդհանրություններ է հայտնաբերել հայերեն և ուրարտերեն լեզուների միջև: Ըստ նրա ստուգարանությունների, պարզվում է, որ ուրարտերենից հայերենին անցել են բազմաթիվ աշխարհագրական անուններ, ինչպես, օրինակ՝ «Այրա-րատ», «Մշտունիք», «Տոսպ», «Տարոն», «Սասուն», «Անձիթ», «Աղձնիք», «Գեղարքունիք», «Բղնունիք» և այլն: Քաղաքների անուններից՝ «Վան», «Նրևան», «Արձնեշ» և այլն: Գետերի և լճերի անուններից՝ «Մեան», «Արածանի», «Ախուրեան» և այլն: Բառերից՝ «ավան», «արի», «ինքն», «ուլի», «աղեղ», «աղորդ», «զարմ», «արմատ», «շերտ», «ծով», «ծես», «երկիր», «ուրվական», «ողջ» և այլն (մոտ 400 ուրարտական բառերի 5—7 տոկոսը առկա է հայերենում):

Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան մասում ապրել են խուրիները և սուրարիները, որոնցից մնացել են մի շարք բեկոաղիր արձանագրություններ: XVIII դարում (մ. թ. ա.) խուրի կամ սուրարի կոչվող ցեղախմբերը կաղմեցին մի պետություն, որը պատմության մեջ հայտնի է Միտանի անունով:

Դ. Ղափանցյանը պարզել է խուրիներեն և հայերեն լեզուների մեջ եղած լեզվական ընդհանրությունները. օրինակ՝ խուրիտ. ast բառը (որ նշանակում է «կին», «ամուսին»), asta հիմքով, անձնանունների մեջ՝ Աշտահոթա, Աշտաբանդա, Աշտակինա և այլն, — ընդհանուր է հին հայերեն «աստ-ևմ» («ամուսնանամ») բառի հետ, որտեղից նաև «աստող»: Այս երկուսի ընդհանուր

աղբյուրը Ղափանցյանը համարել է ակկադական «աշշտու» («ամուսին») բառը։ Ըստ Ղափանցյանի, հայկական բառերից խուռիտական ծագում ունեն «թովել», «թոթվել», «թիվ», «թվել», «խորթ», «կորով», «շանթ», «ներ», «գինդ», հատուկ անուններից՝ «Գագիկ» և այլն։

Խեթական, ուրարտական, խուռիտական և այլ փոքրասիական լեզուների ու հայերենի մեջ եղած լեզվական բնահանրությունները հիմք էին տալիս ակադ. Ղափանցյանին կարծելու, որ հայոց լեզուն իր ծագմամբ ասիանիկ է։ Ղափանցյանը այստեղ նկատի ուներ հայերենի այն ոչ փոխառյալ բառերը, որոնք վերաբերում են արտադրության միջոցներին, մետաղներին, տնային կահ-կարասիներին, ջուհակության և կարելու արհեստին, տնասնապահությանը, գյուղատնտեսությանը, որսորդությանը, բնատնեկան և աղգակցական հարաբերություններին և այլն։ Այդ բառերը կարող են հասկացողություն տալ նախահայերի և հայերի կենցաղի ու կուլտուրայի մասին, որոնք նշանակալից չափով կազմում են նրանց հին հարեանների՝ Փոքր Ասիայի և Ուրարտուի ժողովուրդների հետ։

Դ. Ղափանցյանի հետազոտությունները պարզում են, որ հայոց լեզվում կան փոքրասիական լեզուներից անցած հետևյալ մասնիկները.

-եղ.—օրինակ՝ համեղ, դորեղ և այլն։

-եղեն.—կանաչեղեն, իրեղեն, ամանեղեն, հագուստեղեն և այլն։ «եղ» ածանցն սկզբում եղել է «-ի», որն առկա է խեթերենում, ուրարտերենում, ինչպես նաև վրացերենում։

-արեն||-երեն,—հունարեն, չինարեն, փոխարեն, հայերեն և այլն։ «-Արեն» կամ «-երեն» Ղափանցյանը համարում է բարդ ածանց՝ կազմած «ար» կամ «եր» և «են» ածանցներից։ Այդ երևույթը առկա է մեզրերենում, օրինակ՝ («օղիշար», «սոմխիթար») (շայաստանի բնակիչ, հայ)։

-Արիմ||-երիմ,—համաարիմ, մաերիմ և այլն։

-իմ||-ում,—կամիմ, կարիմ, պարկում և այլն։ Իմում ածանցը գործածական է եղել խեթերենում։

-յուղ,—երկյուղ, ընձյուղ և այլն։

-ույթ,—զայրույթ, բնույթ, դրույթ, ձևույթ, շահույթ և այլն։

-ին,—վերին, ստորին։ «-Ին» ածանցը գործածական է եղել ուրարտերենում, օրինակ՝ «հալդինի», «Ակլինի», այդ մասնիկը գոյություն է ունեցել նաև խուռիտերենում։

-ային,—երկնային, դաշտային և այլն։

-ուր,—թափուր, լազուր և այլն։

-ուտ,—եղեղգնուտ, ուռուտ, խնձորուտ, տանձուտ և այլն։

-ենի,—թղենի, բնկուղենի, թթենի, մայրենի և այլն։

-նի կամ -անի (գործածվում է հոգնակի թվի համար), ավաղանի, կանանի և այլն։

-տի (հոգնակի, համարական իմաստով)—մանկտի, փորոտի, ոսկրոտի և այլն։

Ե. Ղափանցյանը փոքրասիական է համարել նաև մի քանի բայերի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի եղակի թվի երրորդ դեմքի «-ալ» մասնիկը, ինչպես՝ տեսալ, կորալ, փախալ և այլն։ Փոքրասիական հին աստվածների անուններից հայերենում պահպանվել են «Արա», «Թորգ», «Հեպիթ», «Ջիվադ», «Բեփի» և այլ աստվածների անունները։

Ըստ Ղափանցյանի ստուգարանությունների, փոքրասիական ծագում ունեն նաև հայկական «ներ», «ցեղ», «գարմ», «աներ», «գորանչ», «բերի», «թոռ», «պապ», «տատ» և այլ բառեր:

Դ. Ա. Ղափանցյանը պարզվեց նաև հայոց և լազո-մեղրեական լեզուների մեջ եղած լեզվական ընդհանրությունների և փոխառությունների հարցով և հանդեց այն եզրակացության, որ հայոց լեզվի կապերը վրացերենի և մասնավորապես նրա արևմտյան ճյուղի լեզուների հետ շատ հին է, շուրջ երեք հազար հինգ հարյուր տարվա պատմություն ունի: Խեթական բեկառգիր արձանագրությունների համաձայն հաշվարկված ցեղերը, Ճորոխ գետի միջին և վերին հոսանքի մոտ, շիրման և հարևանության մեջ են մտել զանների (լազերի և մեղրեկների) հետ: Ահա այդ ժամանակից էլ հայերեն և լազո-մեղրեական լեզուներում կան մի շարք ընդհանուր բառեր, ինչպես, օրինակ՝ «ախանջ», «բարդի» (բարտի), «բախեր», «ճոռտ», «երինջ», «խունանալ», «ճոթ», «օշոշ», «որոգայթ», «սոխ», «վաղորդյան», «որովայն», «ձուլել», «տեփուր», «փայլ», «քիթ» և այլն:

Այս ընդհանրությունների կողքին Ղափանցյանը պարզել է այն փոխառությունները, որոնք հայերենից են անցել զանական (լազո-մեղրեական) լեզուներին, ինչպես՝ «թան», «մախարդ», «մարադ», «մսուր», «փայտ», «սաբչակ», «դերանդի», «երկաթ» և այլն: Լազո-մեղրեկներից հայերենին անցած փոխառյալ բառեր՝ «կճուճ», «ճղոպուր», «ճիպու», «ոչխար», «ճանճ», «լակոտ», «ճոճեկ» և այլն:

Ե. Ղափանցյանը պարզել է նաև հայերեն ու բաղայերեն, հայերեն և ասսուրա-բաբելական լեզուների լեզվական ընդհանրություններն ու փոխառությունները:

Ղափանցյանը մինչև վերջ էլ մնաց այն համոզման, որ հայերեն լեզուն ծագել է փոքրասիական (ասիանիկ) լեզվական սուբստրատից, սկզբնապես ապրելով խեթական, խուտա-ուրարտական և վրացական էթնիկական և լեզվական աշխարհում¹:

Այդ տեսակետը նա պաշտպանում էր նաև հետագայում: Հայոց լեզվի բնույթի, ծագման և հետագա զարգացման հարցերին է նվիրված վերջերս լույս տեսած «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունը: «Բմ կարծիքով,—գրում է հեղինակը,—հայերենի նկատմամբ ծագումնաբանական (դենևտիկական) հետևություն անելը հօգուտ հնդեվրոպականի թերևս միակողմանի է... Լեզվական տեղային (ասիանիկ) փաստերը, ինչպես նաև հայ էթնիկայի, կուլտուրայի տվյալները խոսում են հօգուտ հայերենի փոքրասիական կուլտուրական ծագման, հօգուտ ասիանիկ բնորոշանի»:

Ընդհատ է, որ հայոց լեզուն բաղմամբով լեզվական ընդհանրություններ ունի հին փոքրասիական (ասիանիկ) լեզուների հետ, որոնք ցույց են տրված պրոֆ. Ղափանցյանի աշխատություններում, սակայն հայերենը փոքրասիական կամ ասիանիկ լեզու համարելն ընդհանուր ճանաչում և ընդունելություն չգտավ, լանի որ հայերենի բերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի հնդեվրոպական բնույթը հաստատվեց գիտության մեջ բաղմամբով անհերքելի, հիմնավոր փաստերով: Ղափանցյանը ևս, իհարկե, չէր ժխտում հայերենի

¹ «...Армянский язык вышел из Мало-азиатского (азиатического) языкового субстрата с первичным бытованием грузинским этническим миром и языками» («К происхождению армянского языка», Ереван, 1946, էջ 11):

հնդկությունական շերտը, կամ նրա բառով ասած՝ նստվածքը Այդ մասին նա գրում է. «Հայերենի հնդկությունական նստվածքը... ունի մոտ չորս հարյուր արմատներ և բառահարաբերական (քերականական) զգալի վկայություններ»²:

Հայերենի հնդկությունականությունը ոչ թե «նստվածք» է, ինչպես պնդում էր ակադ. Ղափանցյանը, այլ նրա բնույթը. հայերենն ունի ոչ թե չորս հարյուր հնդկությունական արմատներ, այլ՝ 8—9 հարյուր, որոնք անառարկելի փաստերով աղացուցված են Հ. Հյուբշմանի, Ա. Մեյերի, Հ. Աճառյանի և ուրիշների կողմից: Ինչ վերաբերում է հայերենի քերականությանը, ապա նրա ողջ կառուցվածքը հիմնականում հնդկությունական է: Հարկ է նշել նաև, որ վերջին տասնամյակի լեզվաբանական հետազոտությունները վերջնականապես պարզեցին մի քանի փոքրասիրական մեղադրանքներ (խեթական, բալա, լուվիական և այլն) հնդկությունական բնույթը: Այդ լեզուները հնդկությունական բնույթից կտրելը և առանձին համարելու անսակետները այժմ արդեն հնադատ պետք է համարել:

* * *

Ե. Ա. Ղափանցյանի գիտական գործունեության մեջ հատուկ տեղ է զբաղում ընդհանուր լեզվաբանական հարցերի քննությունը: 1937 թ. լույս տեսավ նրա «Ընդհանուր լեզվաբանություն» դասագիրքը, որն ընդգրկում էր միայն հնչյունաբանությունը և ներածական մասը: Հետագայում, 1939 թ. լույս տեսավ Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» ընդարձակ աշխատության առաջին հատորը, որը, բացի վերելում հիշված մասերից, բովանդակում էր նաև ձևաբանությունը, բառագիտությունը (խոսատարանության հետ), հեղինակը հույս ուներ գրելու նաև երկրորդ հատորը, ուր պետք է տրվեին լեզվի ծագումը և զարգացումը, լեզվի և գրի փոխհարաբերությունը, լեզուների դասակարգումը և լեզվաբանական տեսությունների ու պարզանքների համառոտ պատմությունը: Սակայն, զժրախառաբար, այդ նպատակը նա չկարողացավ իրագործել:

Ղափանցյանը ընդհանուր լեզվաբանության հարցերի մասին առաջին անգամ հայ ուսանողության ձեռքը տվեց հայերեն մի գիրք, որը ոչ միայն հաղեցված էր բազմաթիվ լեզվական փաստերով, այլև շարադրված էր սովետական լեզվաբանական գիտության սրահանջներին համապատասխան: Ընդհանուր լեզվաբանության մեծ կանգնած էր լեզուն վերնաշենքային կատեգորիա համարելու սխալ սկզբունքի վրա, բայց շատ հարցերում քննադատում էր ակադ. Ն. Յա. Մառի ոչ ճիշտ հայացքները:

Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» դասընթացը ժամանակին մեծ օգնություն էր ոչ միայն ընդհանուր լեզվաբանության, այլև լեզվի պատմության հարցերով զբաղվողներին: Այդ աշխատությունն ունեցավ թե՛ տեսական, և թե՛ գործնական մեծ նշանակություն. քննության ենթարկվեցին և իրենց լուծումն ստացան ընդհանուր լեզվաբանության մի շարք հանդուցալին հարցեր: Այդ աշխատության հրատարակումը մեծ չափով նպաստեց լեզվաբանական կադրեր պատրաստելուն և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողությանը՝ այդ կարևոր գիտությունները յուրացնելու գործում:

2 Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 223:

Արմինյան տեղական՝ սուրարու (խուրի) նախարարի Լեւոնյանի և լեզվական միավոր են հանդիսանում:

Ըստ Ղափանցյանի հետազոտության, հայասացիները (հայասները resn-հայերը), արմենները և նախարար-ուրարտական ցեղերը աստիճանաբար ձուլվեցին՝ կազմելով հայ ժողովրդի կորիզը: Հետազոտում հայեր-արմենների և նրանց շրջապատող ցեղային խմբերի միջև սկսեցին զարգանալ և ամրապնդվել տնտեսական, քաղաքական, կուլտուրական, լեզվական և տերիտորիալ կապերը: Այդ կապերի հիման վրա կատարվեց Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասերում և Վանա լճի ավազանում ապրող ցեղերի միավորումն ու ձուլումը: V—III դդ. (մ. թ. ա.) հայ ժողովրդի այդ հիմնական կորիզի հետ ձուլվում են նաև ուրիշ ցեղեր և ցեղախմբեր:

Ակադեմիկոս Ղափանցյանի գիտական ուսումնասիրությունները մեծապես ազնեցին սովետահայ պատմագիտությանը՝ լուծելու հայերի էթնոգենեզիսի և նրանց սկզբնական պատմությանն ու կուլտուրային վերաբերող շատ կնճռու հարցեր:

Ակադ. Ի. Ա. Ղափանցյանի լեզվաբանական և պատմագիտական աշխատությունների մեջ բազմաթիվ ճիշտ, հիմնավոր, բնորոշ տեսակետների կողքին, կան նաև վիճելի, հիմնավորման կարիք ունեցող առանձին կարծիքներ: Սակայն ինչքան էլ վիճելի լինեն դրանք, այնուամենայնիվ, գիտության և մասնավորապես հայագիտության համար խիստ հետաքրքրական են: Շուրջ 45 տարվա իր գիտական գործունեության ընթացքում Ղափանցյանը իրեն հատուկ պրպտող մտքով ու մեծ ջանասիրությամբ ուսումնասիրում էր հայոց լեզվի պատմության հնագույն շրջանը, հայերի և հայերենի զոյացման և սրանց հետ կապված բազմաթիվ հարակից խնդիրներ: Իր արժեքավոր հետազոտություններով նա խոշոր դործ կատարեց և ուրույն տեղ գրավեց հայագիտության պատմության մեջ: Գիտա-հետազոտական աշխատանքներին զուգընթաց Գ. Ա. Ղափանցյանը զբաղվել է նաև մանկավարժական-դասախոսական գործունեությամբ: Նրանի Պետական համալսարանի հիմնադրման օրից նա հրավիրվել է համալսարանում դասախոսելու Համալսարանում Ղափանցյանը երկար տարիներ դասախոսել է մի շարք գիտցիպլիններ՝ զբաղաբ, հայերենի պատմահամեմատական քերականություն, ուրարտերեն, բնահանուր լեզվաբանություն և այլն: Այդ մասնագիտությունների գծով նա պատրաստել է բազմաթիվ կադրեր:

1943 թ., երբ հիմնադրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, Ղափանցյանը գաղնում է նրա հիմնադիր անդամներից մեկը: Մոտ հինգ տարի նա ղեկավարել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հասարակական գիտությունների բաժանմունքը և վեց տարի՝ լեզվի ինստիտուտը:

Բարձր գնահատելով Գ. Ա. Ղափանցյանի ծառայությունները սովետական գիտության զարգացման գործում, ՍՍՌԿ կառավարությունը նրան պարգևատրեց Լենինի շքանշանով: Պրոֆ. Ղափանցյանին Հայկական ՍՍՌ կառավարությունը շնորհել էր գիտության փաստակափոր գործչի կոչում:

Գ. Ա. Ղափանցյանը մինչև իր կյանքի վերջը (1957 թ. մայիսի 3) ասեղծագործում էր և իր ուժերը ի սպաս դնում սովետական լեզվաբանության ու հայագիտության զարգացմանը:

ГРИГОРИЙ КАПАНЦЯН

Р. О. КОСТАНЫАН

(Р е з ю м е)

Исполнилось пять лет со дня смерти выдающегося армениста, лингвиста, академика Академии наук Армянской ССР Григория Айвазовича Капанцяна.

В течение 45-летней научной деятельности Г. А. Капанцян с большой любовью и с научной тщательностью исследовал культурно-исторические связи армянского народа с окружающими его древнейшими племенами и народностями. Особенно велики его заслуги в деле выяснения связей армянского языка с хеттским, хурритским, урартским, балайским, чанским (лазо-мегрельским) и другими языками.

Научные исследования Г. А. Капанцяна посвящены важным проблемам арменистики, возникновению языка и культуры армянского народа и вопросам их дальнейшего развития. Особую ценность представляют его труды: «Chetto—Armeniaca» (1931), «Общее языкознание» (1939), «История Урарту» (1940), «Хеттские боги у армян» (1940), «Историко-лингвистическое значение топонимики древней Армении» (1940), «Культ Ара Прекрасного» (1944), «К происхождению армянского языка» (1946), «Хайаса—колыбель армян» (1947), «Историко-лингвистические работы» (том I, 1956), «Древний период истории армянского языка» (1961) и другие.

Г. А. Капанцян был крупным урартологом, интерпретировавшим многие урартоведческие вопросы. Занимаясь проблемами общего языкознания, он написал первый крупный научный труд на армянском языке, в котором по-новому осветил и самостоятельно решил ряд общелингвистических вопросов.

Наряду с лингвистическими проблемами в своих трудах Г. А. Капанцян исследовал и решил также серьезные историографические и этнографические вопросы. В этих областях науки он занимает особое место в арменистике.

Языковые общности между хеттским, урартским, хурритским и прочими малоазийскими или азиатскими языками, с одной стороны, и армянским языком, с другой, давали основания акад. Капанцяну полагать, что армянский язык по своему характеру азиатский. Отнесение его к малоазийским языкам является спорной и необоснованной точкой зрения, поскольку индо-европейский характер грамматического строя армянского языка и его основного словарного фонда издавна доказан в науке многочисленными неопровержимыми фактами.

Григорий Айвазович Капанцян до последних дней своей жизни неустанно творил, все свои силы и творческую энергию ставя на службу развития советской лингвистики и арменистики.